



Կարևոր է, որ յուրաքանչյուր ոք ստանա ճշգրիտ բժշկական տեղեկատվություն, որպեսզի կարողանա առավել ճիշտ որոշում կայացնել իր և իր ընտանիքի համար COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ: Միշտ չէ, որ հեշտ է տարբերել ճշգրիտ և կեղծ տեղեկությունները: Պատվաստման վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունները շատ կարևոր են և կարող են օգնել դադարեցնել միջերը և ասեկոսները:

Եթե դիտարկում եք COVID-19-ի դեմ պատվաստումը կամ փորձում եք օգնել չկողմնորոշվող ընկերոջը, այցելեք հետևյալ [վստահելի աղբյուրները](#)՝ պատվաստման վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների համար, և ծանոթացեք ստորև ներկայացված փաստերին.

Միջ #1: Պատվաստանյութերը մշակվել են չափազանց արագ և մշակողները չգիտեն՝ արդյոք պատվաստանյութերն անվտանգ են:

Փաստեր: Պատվաստանյութերը կարող են ստեղծվել արագ և այնուամենայնիվ լինել անվտանգ մի քանի պատճառներով.

- Գիտնականները մեծ առաջընթաց են ապահովել, քանի որ նրանք արդեն ուսումնասիրել էին այլ կորոնավիրուսներ, ինչպիսիք են SARS-ը և MERS-ը: Նրանք նաև ուսումնասիրել էին իՌՆԹ-ն (mRNA), վիրուսային վեկտորի պատվաստանյութերը և ենթամիավոր սպիտակուլցային պատվաստանյութեր: Սրանք COVID-19-ի դեմ Միացյալ Նահանգներում օգտագործվող պատվաստանյութերի տեսակներն են:
- Կառավարությունը տրամադրել է մեծ գումարներ և միջոցներ՝ պատվաստանյութի մշակման համար: Սա հեշտացրել է գիտնականների համատեղ աշխատանքը:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերի փորձարկումներ իրականացնելու համար հետազոտողները օգտագործել են գոյություն ունեցող ցանցերը: Փորձարկումները հնարավոր էր արագ սկսել, քանի որ մարդիկ մեծ ցանկություն ունեին մասնակցելու:
- Սննդամթերքի և Դեղամիջոցների Վարչությունը (FDA) և Հիվանդությունների Վերահսկման Կենտրոնները (CDC) առաջնահերթություն են տվել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի վերափորձարկմանը ու թույլտվություն տրամադրելուն:
- Պատվաստանյութերի մշակման և արտադրության որոշ փուլեր իրականացվել են միաժամանակ՝ մեկը մյուսին հաջորդելու փոխարեն: Օրինակ՝ արտադրությունը սկսվել է այն ժամանակ, երբ դեռ կլինիկական փորձարկումներ էին կատարվում: Կարևորն այն է, որ ձեռնարկվել է յուրաքանչյուր քայլ, որն անհրաժեշտ է նոր պատվաստանյութ պատրաստելու և դրա անվտանգությունն ապահովելու համար:

Մինչ օրս Միացյալ Նահանգներում տրվել է COVID-19-ի դեմ պատվաստանյութի ավելի քան 619 միլիոն դեղաչափ: Թեև կարող են դրսևորվել լուրջ կողմնակի ազդեցություններ, դրանք շատ հազվադեպ են: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ժամանակին ստանալու առավելությունները գերազանցում են վտանգները:

Միջ #2: Մենք բավարար տեղեկություններ չունենք երկարատև ազդեցությունների մասին:

Փաստեր: Պատվաստանյութերի գործողության գիտական ընկալումից պարզ է դառնում, որ շատ քիչ է հավանականությունը, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը առաջացնեն երկարատև կողմնակի ազդեցություններ:

Հիմնվելով այն ամենի վրա, թե ինչ գիտենք մյուս պատվաստանյութերի մասին՝ երկարատև կողմնակի





ազդեցությունները սովորաբար տեղի են ունենում պատվաստվելուց հետո վեց շաբաթա ընթացքում: Այդ պատճառով, Մենդամթերքի և Դեղորայքի Վարչությունը (FDA) պահանջեց COVID-19-ի դեմ պատվաստանյութեր պատրաստող ընկերություններից հետևել փորձարկումների մասնակիցների առողջական վիճակին առնվազն ութ շաբաթ: Բացի այդ, CDC-ն շարունակում է ուշադիր հետևել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի ազդեցություններին՝ FDA-ի կողմից թույլտվություն ստանալուց կամ հաստատվելուց և ավելի ու ավելի շատ մարդկանց վրա կիրառվելուց հետո: Անցել է ավելի քան մեկ տարի COVID-19-ի դեմ պատվաստանյութերի թույլատրումից ի վեր (և ավելի քան երկու տարի՝ պատվաստանյութերի փորձարկումների մեկնարկից): Միլիարդավոր մարդիկ պատվաստվել են COVID-19-ի դեմ պատվաստանյութերով, և անսպասելի երկարատև ազդեցություններ չեն արձանագրվել:

Հակառակ դրան, մենք գիտենք, որ COVID-19-ի հարուցիչ վիրուսը կարող է առաջացնել որոշ երկարատև ազդեցություններ ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների մոտ: Օրինակ՝ որոշ մարդիկ կարող են COVID-19-ով վարակվելուց հետո մի քանի ամիս շարունակ ունենալ այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են չափազանց հոգևած զգալը, քնի հետ կապված դժվարությունը, գլխացավերը և հևոցը, որը հաճախ կոչվում է [երկարատև COVID](#): Ավելին, լուրջ առողջական խնդիրը, որը կոչվում է [Բազմահամակարգային բորբոքային համախտանիշ](#), կարող է ախտահարել երեխաներին (MIS-C) և մեծահասակներին (MIS-A): MIS-ը հազվադեպ հանդիպող, սակայն COVID-19-ի հետ կապված լուրջ առողջական խնդիր է, երբ մարմնի տարբեր մասերը բորբոքվում են՝ ներառյալ սիրտը, թոքերը, երիկամները, ուղեղը, մաշկը, աչքերը կամ աղեստամոքսային համակարգի օրգանները: Շատ հիվանդների անհրաժեշտ է լինում հիվանդանոցում բուժվել, իսկ որոշները, ցավոք, մահանում են: COVID-19-ի դեմ պատվաստումը ստեղծում է պաշտպանվածություն վիրուսի այդ «երկարաժամկետ» հետևանքներից:

Կարող եք իմանալ ավելին՝ այցելելով CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստման անվտանգություն](#) կայքէջը:

Միջ #3: Պատվաստանյութերը պարունակում են COVID-19-ի հարուցիչ վիրուս, որը կարող է վարակել ձեզ:

Փաստեր: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուս որևէ ձևով: Դրանք չեն կարող վարակել ձեզ COVID-19-ով:

Եթե պատվաստվելուց անմիջապես հետո դուք վարակվում եք COVID-19-ով, ապա պատճառն այն է, որ դուք վարակվել եք COVID-19 ունեցող որևէ անձից մոտավորապես նույն ժամանակահատվածում, երբ պատվաստվել եք: Վարակվելուց հետո ախտանիշների առաջացումը կարող է տևել մինչև 10 օր: Այսպիսով, եթե դուք վարակվում եք պատվաստվելուց անմիջապես առաջ, կարող է չհիվանդանաք նախքան ձեր պատվաստվելը:

Երբեմն մարդիկ ջերմություն են ունենում կամ հոգևածություն են զգում պատվաստվելուց հետո մեկից երկու օր շարունակ: Դրանք պատվաստանյութի բնական կողմնակի ազդեցություններ են, քանի որ մարմինը ստեղծում է դիմադրողականություն, ոչ թե հարուցիչից առաջացած հիվանդության նշանները: Դրանք երկար չեն տևում և անհետանում են մի քանի օրվա ընթացքում:





Միջ #4 Երբ որևէ անձ պատվաստվում է COVID-19-ի դեմ, դա COVID-19-ի վիրուսը տարածելու և շրջապատող մարդկանց վարակելու պատճառ է հանդիսանում:

Փաստեր: Միացյալ Նահանգներում թույլատրված չորս պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19-ի վիրուսը որևէ ձևով: Պատվաստվելը չի կարող վիրուսի տարածման պատճառ դառնալ:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը որևէ կերպ չեն կարող որևէ մեկին վարակել COVID-19-ի հարուցիչ վիրուսով կամ վարակող դարձնել անձին: Պատվաստման հետևանքով վիրուսի տարածումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե պատվաստանյութը պարունակում է վիրուսի թուլացած տեսակը: Միացյալ Նահանգներում թույլատրված չորս պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19-ի վիրուսը որևէ ձևով: Չկա վիրուս, որը կարող է տարածվել:

Միջ #5: Այս պատվաստանյութերն օգտագործում են գենետիկ նյութ՝ վիրուսի դեմ պայքարելու համար: Սա նշանակում է, որ դրանք կարող են ազդել մեր գեների վրա:

Փաստեր: Novavax պատվաստանյութը պարունակում է COVID-19-ի հասկանման սպիտակուց: Այն չի պարունակում որևէ գենետիկ նյութ կամ COVID-19-ի վիրուս: Pfizer, Moderna և J&J պատվաստանյութերն օգտագործում են գենետիկ նյութ, որը սովորեցնում է ձեր մարմնին պայքարել վիրուսի դեմ: Սակայն գենետիկ նյութը չի փոխում ձեր գեները:

COVID-19-ի դեմ պատվաստանյութում պարունակվող ԴՆԹ-ն կամ ՌՆԹ-ն մեր մարմնի բջիջներին սովորեցնում են՝ ինչպես ստեղծել COVID-19 վիրուսի վրա հայտնաբերված հասկային սպիտակուցի մի մասը: Այս քայլը անհրաժեշտ է մեր մարմնի իմունային համակարգին՝ արձագանք ստեղծելու համար: Իմունային համակարգն այնուհետև մշակում է հակամարմիններ և պատրաստում իմունային բջիջները՝ պայքարելու COVID-19-ի վիրուսի դեմ, եթե հետագայում վարակվենք վիրուսով:

Pfizer և Moderna պատվաստանյութերը պարունակում են իՌՆԹ՝ տեղեկատվական կամ ինֆորմացիոն ՌՆԹ (mRNA): ԻՌՆԹ -ն երբեք չի ներթափանցում բջջի միջուկ, որտեղ տեղակայված է մեր ԴՆԹ-ն, հետևաբար այն չի կարող փոփոխել մեր ԴՆԹ-ն: J&J պատվաստանյութը ադենովիրուսային պատվաստանյութ է, որը պարունակում է ԴՆԹ: Ադենովիրուսային պատվաստանյութը օգտագործում է վիրուս, որը փոփոխվել է այնպես, որ այն չի կարող մեզ հիվանդացնել և չի կարող կրկնօրինակվել: Պատվաստանյութի ԴՆԹ-ն չի կարող համակցվել մեր ԴՆԹ-ի (կամ թրոմոսոմների) հետ, քանի որ պատվաստանյութը չունի ԴՆԹ-երն իրար կապակցող ֆերմենտ (որը կոչվում է ինտեգրազա (integrase)):

Միջ #6: Պատվաստանյութերը պարունակում են միկրոչիպ, որն օգտագործվում է իմ շարժին հետևելու համար:

Փաստերը: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը չեն պարունակում միկրոչիպեր կամ շարժին հետևող որևէ տեսակի սարք:

Ներարկիչի ասեղը, որն օգտագործվում է COVID-19-ի դեմ պատվաստանյութը ներարկելու համար, շատ ավելի փոքր է, քան անգամ ամենափոքր միկրոչիպը: Այս միջոց ծագել է սոցիալական ցանցերում, որտեղ պնդում են, որ Microsoft-ի համահիմնադիր Բիլ Գեյթսը ցանկանում է հետևել մարդկանց՝ նրանց մեջ տեղադրելով միկրոչիպեր: Բիլ և Մելինդա Գեյթս Յիմնադրամը (The Bill and Melinda Gates Foundation)





պաշտոնապես հայտարարել է, որ այս պնդումը [կեղծ](#) է: Ինչպես շատ առցանց միջեր, այս պատմությունը ևս դժվար է կանգնեցնել նույնիսկ այն բանից հետո, երբ շարունակաբար ապացուցվում է, որ այն կեղծ է:

Միջ #7: Պատվաստվելուց հետո ներարկիչի ասեղը մնում է ձեր թևի մեջ:

Փաստեր: Պատվաստվելուց հետո ներարկիչի ասեղը ձեր թևում չի մնում: Ասեղը «անհետանում է», քանի որ ներարկումից հետո այն հետ է քաշվում ներարկիչի կամ անվտանգության խցիկի մեջ:

Հավանաբար դուք տեսել եք այն տեսանյութը, որը թվում է՝ ցույց է տալիս, թե պատվաստվելուց հետո ասեղը մնում է մարդու թևում: Այն, ինչ իրականում տեսնում եք, ետ քաշվող ասեղն է գործողության մեջ: [Ետ քաշվող ասեղներով ներարկիչները](#) գործում են պատվաստանյութի ներարկումից հետո ասեղը ներարկիչի կամ ներարկիչի կողքի անվտանգության խցիկի մեջ ետ քաշվելու միջոցով: Բուժաշխատողներն օգտագործում են այդ տիպի ներարկիչները, որպեսզի խուսափեն ասեղներով իրենց ծակելուց:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերի ներարկման համար օգտագործվող ասեղը շատ բարակ է, իսկ պատվաստանյութի բանակը՝ շատ քիչ: Քանի որ ասեղը շատ փոքր է, իսկ ներարկվող դեղաչափը շատ քիչ, գուցե չզգաք, թե ինչպես է ասեղը մտնում կամ պատվաստանյութը ներարկվում ձեր թևի մեջ: Նախքան պատվաստանյութի ներարկումը, դուք կարող եք տեսնել ներարկիչի թափանցիկ հեղուկը և ասեղը: Պատվաստանյութի ներարկումից հետո կտեսնեք, որ հեղուկ չի մնացել, և ասեղը գտնվում է ներարկիչի (կամ անվտանգության խցիկի) ներսում:

Միջ #8: «Մազնիսի թեստը» ապացուցում է, որ պատվաստվելուց հետո ձեր թևում միկրոջիպ կամ ասեղ է մնացել:

Փաստեր: Սա պարզապես խորամանկություն է՝ ձեզ խաբելու համար:

Սոցիալական ցանցերում կան տեսանյութեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են մազնիսները կաչում մարդկանց թևերի այն հատվածներին, որտեղ ներարկվել է պատվաստանյութը: Սա արվում է՝ ապացուցելու, որ պատվաստանյութը պարունակում են միկրոջիպեր կամ որ ասեղը մնացել է ձեր թևում: Սա պարզապես խորամանկություն է:

Մազնիսները կարող են հեշտությամբ կաչել մաշկին կաչուն ժապավենով կամ քսուքով: Նույնիսկ մազնիսը կամ մետաղադրամը ձեր մաշկին ամուր սեղմելու դեպքում դրանք կարող են մնալ ձեր մաշկին կպած: Բացի այդ, մազնիսը ձգելու համար անհրաժեշտ մետաղը շատ ավելի մեծ ծավալ է պահանջում, քան հնարավոր է տեղավորել այն ասեղի մեջ, որն օգտագործվում է COVID-19-ի դեմ պատվաստանյութը ներարկելու համար:

Միջ #9: Չի կարելի վստահել այն անձանց, որոնք ստեղծել են այս պատվաստանյութերը: “Big Pharma”-ն պարզապես ցանկանում է գումար աշխատել և վճարել է բժիկներին, որպեսզի բժիշկները հայտնեն, որ իրենց ապրանքն անվտանգ է:

Փաստերը: Այս պատվաստանյութերի մշակման գործընթացը եղել է թափանցիկ: Անկախ գիտնականներին և հանրությանը հասանելի են ավելի շատ տեղեկություններ և տվյալներ, քան երբևէ:

Թեև կան դեղագործական ընկերությունների սարսափելի օրինակներ, երբ շահույթը գերադասվել է անվտանգությանը, այնուամենայնիվ այս պատվաստանյութերի մշակումը իրականացվել է հանրության





աչքի առջև: Պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության (եզրույթ, որն օգտագործվում է՝ նշանակելու, որ պատվաստանյութերը գործում են) վերաբերյալ ակնարկները հրապարակվել են, որպեսզի հասանելի լինեն բոլորին:

Չետագոտությունը վերահսկող մարդկանց շարքերում են երկրի տարբեր հաստատություններից բժիշկներ: Նրանք ներկայացնում են զանազան բժշկական խմբեր, այդ թվում այնպիսի խմբեր, որոնք բազմիցս պայթարել են առողջապահական ոլորտում ռասիզմի դեմ: Նրանք չեն վճարվում այս աշխատանքի համար և ներգրավված են՝ ստուգելու հետազոտության որակը և ապահովելու, որ հավասարությունը պաշտպանված լինի ողջ գործընթացի ընթացքում: Ստուգող-վերահսկողների անունների ցանկին և նրանց գործունեության վայրերին ծանոթանալու համար այցելեք Վարակազերման Պրակտիկայի Խորհրդատվական Կոմիտեի (ACIP) [կայքէջ](#): Կարող եք իմանալ ավելին այս մարդկանց մասին՝ փնտրելով նրանց համացանցում: Կարող եք նաև առցանց դիտել ACIP-ի որոշ հանդիպումներ:

Միջ #10: Սևամորթ և լատինական համայնքների նկատմամբ դրսևորվում է տարբերվող վերաբերմունք պատվաստման հարցի շուրջ, քանի որ չկա փաստացի ապացույց, որ այն անվտանգ է:

Փաստեր: Սևամորթ և լատինական համայնքների նկատմամբ տարբերվող վերաբերմունք չի դրսևորվում: Սակայն նրանց խրախուսվում է պատվաստվել, քանի որ նրանց մոտ COVID-19-ի հետևանքով վարակման, հոսպիտալացումների և մահերի թիվն ավելի բարձր է:

Այս մտահոգությունը հասկանալի է: Նախկինում տարբերվող մաշկի գույն ունեցող մարդկանց ստել կամ ստիպել են դեղեր օգտագործել կամ մասնակցել բժշկական գործողությունների՝ իրականացնելով ոչ էթիկական գործելակերպ և վտանգելով նրանց առողջությունը:

Միացյալ Նահանգներում հասանելի չորս պատվաստանյութերը փորձարկվել են զանազան մարդկանց շրջանում: Ձանքեր են գործադրվել՝ ներառելու սևամորթ և լատինացի կամավորների այնպիսի քանակ, որն արտացոլում է բնակչությունը: Դա արվել է համոզվելու համար, որ պատվաստանյութերն անվտանգ են և արդյունավետորեն են գործում այս խմբերում: Դա արվել է նաև՝ կանխելու, որ այս խմբերը չդառնան բժիշկների անուշադրության կամ ռասիզմի զոհ:

Բժիշկները և հանրային առողջապահական ծրագրերը քրտնաջան աշխատում են՝ ապահովելու, որ սևամորթները և լատինական համայնքները հավասար հասանելիություն ունենան COVID-19-ի դեմ պատվաստանյութերին: Սևամորթ և լատինացի բնակիչների շրջանում, բնիկ ամերիկացիների և բնիկ հավայանցիների հետ միասին, COVID-19-ի հետևանքով վարակման, հոսպիտալացումների և մահերի թիվն ամենաբարձրն է: Այդ պատճառով դուք կարող եք տեսնել գովազդային վահանակներ կամ լսել գովազդ, որը խրախուսում է այս համայնքներին պատվաստվել:

Լոս Անջելեսի Շրջանը ցանկանում է, որ ամենից շատ տուժած այդ համայնքներն ունենան հնարավորինս շուտ պատվաստվելու հնարավորություն: Լոս Անջելեսի Շրջանի սևամորթ և լատինացի բնակիչների համար վտանգները մեծ են: Խնդրում ենք կարդալ պատվաստանյութերի մասին վստահելի աղբյուրները: Խոսեք լավատեղյակ մարդկանց հետ, որոնք վստահում եք՝ ձեր բժշկի, ճշգրիտ գիտությունների ուսուցչի, դեղագործի հետ, և ուղղեք նրանց ձեր հարցերը և հայտնեք մտահոգությունները: Ձեր հարցերը կարևոր են և պետք է արժանանան բանիմաց և վստահելի անհատների պատասխաններին:

Միջ #11: Անհրաժեշտ չէ, որ ես պատվաստվեմ, եթե արդեն վարակվել եմ COVID-19-ով:





Փաստեր: Բժիշկները և գիտնականները խորհուրդ են տալիս, որ բոլորը ստանան COVID-19-ի դեմ իրենց պատվաստանյութերը, նույնիսկ այն մարդիկ, որոնք արդեն վարակվել են COVID-19-ով:

Բնական անվարակունակությունն այն պաշտպանությունն է, որը դուք ձեռք եք բերում COVID-19-ով հիվանդանալուց հետո: Այդ պաշտպանությունը կարող է չպահպանվել, և դուք կարող եք կրկին վարակվել COVID-19-ով: Պատվաստումը, ներառյալ ժամանակին խթանիչ դեղաչափերի ընդունումը, կստեղծեն անվարակունակություն՝ COVID-19-ից ավելի լավ և երկար պաշտպանվելու համար: Պատվաստումը նվազեցնում է COVID-19-ով կրկին վարակվելու հավանականությունը: Եթե դուք նորից վարակվեք, այն կնվազեցնի ծանր հիվանդանալու, հոսպիտալացվելու և COVID-19-ի հետևանքով մահանալու վտանգը:

Միջ #12: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը պարունակում են արհեստականորեն ընդհատված պտղի բջիջներ: Ես հավանություն չեմ տալիս արհեստական ընդհատմանը (աբորտ): Գիշտ չե պատվաստվելը, քանի որ պատվաստանյութերը պարունակում են արհեստականորեն ընդհատված պտղի բջիջներ:

Փաստեր: Միացյալ Նահանգներում թույլատրված պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում որևէ պտղաբջիջ կամ պտղի հյուսվածք:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մշակման, փորձարկման կամ արտադրության մեջ օգտագործվել են այն պտղի բջիջները, որոնք ստացվել են 1973 և 1985 թվականներին լաբորատորիաներում կատարված 2 աբորտների բջիջներից: Պատվաստանյութերում օգտագործվող պտղի բջիջներից ոչ մեկը չի ստեղծվել վերջերս արված արհեստական ընդհատումից կամ հատուկ պատվաստանյութի մշակման նպատակով կատարված արհեստական ընդհատումից:

- **Pfizer-ը և Moderna-ն** չեն օգտագործել պտղի որևէ բջիջի շարք COVID-19-ի դեմ իրենց պատվաստանյութերի մշակման կամ արտադրման գործընթացում: Նրանք օգտագործել են պտղի բջիջների շարք լաբորատոր հետազոտության ժամանակ՝ նախքան իրենց պատվաստանյութերը մարդկանց վրա փորձարկելը:
- **Johnson & Johnson-ը** օգտագործել է պտղի բջիջների շարք՝ COVID-19-ի դեմ իրենց պատվաստանյութերի մշակման և փորձարկման համար: Նրանք օգտագործել են պտղի բջիջները նաև պատվաստանյութի արտադրության մեջ:
- **Novavax-ը չի օգտագործել պտղի բջիջ COVID-19-ի դեմ իր պատվաստանյութը մշակելու կամ փորձարկելու համար:**

Կաթոլիկ Եկեղեցին վերանայել է COVID-19-ի դեմ պատվաստանյութերի արտադրության նպատակով պտղի բջիջների օգտագործման հարցը: Եկեղեցին հայտարարում է, որ «բարոյապես ընդունելի է պատվաստվել COVID-19-ի դեմ այն պատվաստանյութերով, որոնք օգտագործել են արհեստականորեն ընդհատված պտուղների բջիջներ իրենց հետազոտությունների և արտադրության գործընթացում»:

Եթե այս հարցը մտահոգում է ձեզ, հնարավոր է, որ ցանկանաք ծանոթանալ [COVID-19-ի դեմ պատվաստանյութերը և պտղի բջիջները](#) նյութին, որպեսզի կարողանաք հիմնավորված որոշում կայացնել պատվաստման վերաբերյալ:





Միջ #13: Մենք չգիտենք՝ ինչ են պարունակում COVID-19-ի դեմ պատվաստանյութերը

Փաստեր: Պատվաստանյութի բաղադրիչները հասանելի են բոլորին:

Միացյալ Նահանգներում հասանելի 4 պատվաստանյութերի բաղադրիչները տարբերվում են՝ ըստ արտադրողի: Իմացեք ավելին այն մասին, թե ինչ բաղադրիչներ են ներառված և ներառված չեն COVID-19-ի դեմ [Pfizer](#), [Moderna](#), [Novavax](#) և [Johnson & Johnson](#) պատվաստանյութերում:

Բացի իմունային համակարգը խթանող գենետիկ նյութից կամ օգտագործված սպիտակուցից, բաղադրիչները բավական տարածված են: Որոշ բաղադրիչներ ունեն գիտական քիմիական անուններ, սակայն, եթե որոնեք այդ անունները, կպարզեք, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերում պարունակվող գրեթե բոլոր բաղադրիչները հանդիպում են շատ մթերքներում: Դրանք անվտանգ են, եթե դուք չունեք ավերգիա բաղադրիչներից որևէ մեկի նկատմամբ:

Միացյալ Նահանգներում հասանելի ոչ մի պատվաստանյութ չի պարունակում մենդային սպիտակուցներ (ինչպես օրինակ՝ ձու, կամ ընկուզեղեն պարունակող արտադրանքներ), լատեքս, հակաբիոտիկներ և այլ դեղամիջոցներ, կամ կոնսերվանտներ (ինչպես օրինակ՝ թիմերոզալ կամ սնդիկ), կամ հյուսվածքներ (օրինակ՝ ընդհատված պտղի բջիջներ կամ կենդանիներից վերցված որևէ նյութ): Դրանք չեն պարունակում մետաղներ, ինչպիսիք են երկաթը, նիկելը, կոբալտը, լիթիումը և հողի հազվագյուտ համաձուլվածքները: Պատվաստանյութերը չեն պարունակում նաև արտադրամասային արտադրանք, ինչպիսիք են միկրոէլեկտրոնիկան, էլեկտրոդները, անխաձնային նախադրվակները կամ նախադրային կիսահաղորդիչները:

Միջ #14: VAERS-ը՝ Պատվաստման Բացասական Զեռուանքների Վերաբերյալ Զաղորդման Զամակարգը, ցույց է տալիս, որ հազարավոր մարդիկ, այդ թվում՝ երեխաներ, մահացել են COVID-19-ի դեմ պատվաստումից:

Փաստեր: Միայն VAERS-ին ներկայացված հաղորդումները չեն կարող և չպետք է օգտագործվեն՝ որոշելու համար՝ արդյոք պատվաստումն առաջացրել է բացասական հետևանք: COVID-19-ի դեմ պատվաստումից հետո կարող են առաջանալ լուրջ բացասական հետևանքներ, սակայն դրանք հազվադեպ են պատահում: COVID-19-ի դեմ պատվաստման հետևանքով երեխաների մահերի հաստատված դեպքեր չեն արձանագրվել: Զակառակ դրան, 2022 թվականի Օգոստոսի 1-ի դրությամբ, ավելի քան 1700 երեխաներ մահացել են COVID-19 վարակից:

VAERS-ի՝ հանրությանը հասանելի տվյալներում հաղորդված մահերի թվի վերաբերյալ եղել է շփոթմունք: Մարդիկ VAERS-ում մահվան դեպքերի մասին հաղորդումները սխալմամբ մեկնաբանել են որպես պատվաստման հետևանքով առաջացած մահեր: Դրանք ճշգրիտ տվյալներ չեն: VAERS-ն ընդունում է պատվաստմանը հաջորդող առողջական բացասական հետևանքների մասին բոլոր հաղորդումները: Յուրաքանչյուրը կարող է [տեղեկություններ հաղորդել VAERS-ին](#), ներառյալ հանրության անդամները: VAERS-ին ներկայացված որոշ հաղորդումներ ներկայացնում են պատվաստման իրական արձագանքներ: Մյուսները առողջության հետ կապված պատահական բացասական հետևանքներ են և առնչություն չունեն պատվաստման հետ: Օրինակ, եթե մարդը մահանում է դժբախտ պատահարից պատվաստումից մի քանի օր անց, այն կարող է հաղորդվել VAERS-ում: VAERS-ում այդ մահը նման է լինելու պատվաստման հետևանքի, քանի որ այն տեղի է ունեցել անձի պատվաստումից անմիջապես հետո, թեև դա կարող է որևէ կապ չունենալ պատվաստման հետ: Որոշ հաղորդումներ կարող են պարունակել թերի, ոչ ճշգրիտ, պատահական, ստուգվելու հնարավորություն չունեցող կամ նույնիսկ կեղծ տեղեկություններ:

VAERS-ի տվյալների սահմանափակումների մասին ավելին իմանալու համար այցելեք CDC-ի [VAERS-ի կայքէջը](#) կամ դիտեք [VAERS և պատվաստման անվտանգություն. ինչպես է այն աշխատում](#) տեսանյութը:





Պատվաստման անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք CDC-ի [COVID-19-ի դեմ պատվաստման անվտանգության](#) կայքէջը:

Հավելյալ Աղբյուրներ

Այլ միջերի բացահայտումների համար այցելեք՝

- CDC՝ [Միջեր և փաստեր COVID-19-ի դեմ պատվաստման մասին](#)
- *Ֆիլադելֆիայի Մանկական Հիվանդանոց*՝ [COVIDVaccineAnswers.org](#)
- *Ջոնս Հոփկինս*՝ [COVID-19-ի դեմ պատվաստում. միջերն ընդդեմ փաստերի](#)
- *FactCheck.org*՝ [Սխալ փատկերագումներ COVID-19-ի վերաբերյալ](#)

Կեղծ տեղեկությունները ճանաչելու վերաբերյալ խորհուրդների համար այցելեք՝ *UCSF-ի* [Առողջապահական տեղեկատվության գնահատում](#):